

ՄԵՐ ԽՕՍՔԸ



«Անկախություն» բառացիորեն կը նշանակէ ինքնավարություն, ազատություն:

Սակայն իրականության մէջ անկախության գաղափարը շատ աստիճանով հսկայական է, քան ցանկացած բառ կամ խօսք կարող է երբեք սահմանել: Ան միայն կրնայ ամբողջականություն ըլլալ, երբ ժողովուրդի մը մարդկային եւ կրօնական իրաւունքները կը յարգուին ու անոր ազգային մշակոյթը, լեզուն եւ ինքնութիւնը կարելի կ'ըլլայ պահպանել:

Անկախութիւնը իր հետ կը բերէ հպարտության խոր զգացում: Անկախ երկրի մը քաղաքացին կը ձգտի ապրիլ իր հայրենիքին մէջ եւ իր ու իր գաւազանի ապագան կապել հայրենիքին ապագային: Սակայն այս ամիս, Արցախի Հանրապետության անկախության 33-րդ ամեակին օրով, մինչ ան գերի ինկած է Ատրպէյճանի ձեռքն ու տեղահանուած է անոր ժողովուրդը, ասելի քան երբեք կը գիտակցինք թէ անկախութիւնը որքան սուղ է ու դիւրաբեկ*: Կարելի չէ գոհանալ ազատ ապրելու մեր իրաւունքը ապահովելով, այլեւ պէտք է ամէն օր ձգտիլ այդ իրաւունքին արժանի ըլլալու համար:

Մեր նորագոյն պատմության էջերը փաստ են, որ մեր պայքարը տակաւին նոր կը սկսի: Թէեւ անկախ է Հայաստանի Հանրապետութիւնը, սակայն վիրաւոր է Արցախ Աշխարհը: Ուստի այս Սեպտեմբերին, ուխտենք այնպիսի նուիրումով ծառայել հայրենիքին, որ ազատության սիրոյն երկինք սաւառնած մեր հին եւ նոր նահատակներուն հոգիները խաղաղութեամբ ննջեն, եւ վերականգնելով* Արցախի Հանրապետութիւնը՝ վերականգնենք* մեր ազգային արժանապատուութիւնը*:

Ծանօթ. Հետեւեալ աստղը (*) ունեցող բոլոր բառերուն իմաստները կարելի է գտնել, այս թիւի **ԱՂՈՒՈՐ ԲԱՆԵՐ** բաժնին մէջ:



Դարձեալ վերամուտ է, եւ դպրոցները լայն բացած են իրենց դռները:

Աշակերտները դպրոց կը վերադառնան ուրախ-գուարթ եւ կազդուրուած: Շատերը անհամբեր են տեսնելու իրենց հին դասընկերները, իսկ ուրիշներ՝ ծանօթանալու նոր ընկերներու: Բոլորը կ'ուզեն պատմել իրենց ամառնային ճամբորդութիւններուն, բանակումներուն եւ արկածախնդրութիւններուն մասին: Սակայն պէտք չէ մոռնալ, որ մէկ կողմէն կը կուտակուին նաեւ անթիւ-անհամար տնային աշխատանքները: Նոր տարեշրջանին ընթացքին լաւ արդիւնքներ ապահովելու համար անհրաժեշտ է կարգաւորել քունը՝ օրական նուազագոյնը 8-10 ժամ քնանալով, ինչպէս նաեւ սննդականոնը՝ տնային օգտակար ճաշեր, պտուղներ եւ բանջարեղէններ ուտելով: Պէտք է նաեւ չափաւորել ելեկտրական սարքերու գործածութիւնը՝ դասարանէն ներս բաւարար կեդրոնացում ապահովելու եւ դասը դիւրին եւ արագ ձեւով ըմբռնելու համար:

Վերջապէս, անսահման համբերութիւն կը մաղթենք շատ սիրելի ուսուցիչներուն եւ ծնողներուն:

Բարի վերամուտ եւ բարիտարեշրջան բոլորին:

ՏՕՆ ԽԱԶՎԵՐԱՅ



Ամէն տարի Սեպտեմբեր 15-ին նախորդող կամ յաջորդող Կիրակին, Հայ Առաքելական եկեղեցին կը նշէ Խաչվերացի տօնը, որ եկեղեցոյ հինգ տաղաւարներէն մէկն է: Խաչվերաց կը նշանակէ խաչը վեր բարձրացնել: Այս տօնը նուիրուած է Յիսուսի իսկական խաչափայտին վերադարձին:

Առաջին քրիստոնէայ կայսրին՝ Մեծն Կոստանդիանոսին մայրը՝ Ս. Հեղինէ 326 թուականին ուխտագնացութիւն կը կազմակերպէ դէպի Երուսաղէմ, ուր կը գտնէ Քրիստոսի իսկական խաչափայտը: Ան կը կառուցէ Ս. Յարութիւն եկեղեցին Քրիստոսի գերեզմանին վրայ եւ այնտեղ կը տեղադրէ խաչափայտը: Դարեր ետք պարսիկներուն Խոսրով Բ. թագաւորը կը յարձակի Երուսաղէմի վրայ եւ կը գրաւէ քաղաքը: Իսկ խաչափայտը հետը կը տանի Տիգրան:

627 թուականին, հռոմէացի Հերակլ կայսրը, հայ իշխաններու եւ զինուորներու օգնութեամբ, կը յաղթէ պարսիկներուն: Ան կ'որոշէ խաչափայտը վերադարձնել Երուսաղէմ եւ յանձնել Ս. Յարութիւն եկեղեցոյ:

Հայաստանի ճամբով փոխադրութեան ընթացքին, Հայաստանի մէջ տեղի կ'ունենան մեծ հանդիսութիւններ եւ կրօնական արարողութիւններ: Այս դէպքին յիշատակը յանձնարուելու համար, կը հաստատուի խաչին գերութենէն ազատագրումի այս տօնը:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ



Միքայել Նալչանտեան

Հայ գրող եւ բանաստեղծ Միքայել Նալչանտեան ծնած է 1829 թուականի Նոյեմբեր 2-ին, Նոր Նախիջեւանի մէջ: Փոքր տարիքին իր ուսումը ստացած է ազատամիտ քահանայի մը կողմէ: Իսկ համալսարանական ուսումը ստացած է Մոսկուայի մէջ, միեւնոյն ժամանակ դասաւանդելով հայոց լեզու Լազարեան ճեմարանին մէջ:

Միքայել Նալչանտեան յեղափոխական էր: Ան համոզուած էր, որ «ստրկութեան մէջ չկայ եւ չի կրնար ըլլալ լուսաւորութիւն»: Ան իր ստեղծագործութիւններով միշտ պաշտպանած է հայ գիւղացիին դատը: Անոր շատ յայտնի դարձած բանաստեղծութիւններէն մէկն է «Երգ Ազատութեան»ը: Նալչանտեան նաեւ հեղինակն է Հայաստանի Հանրապետութեան քայլերգին՝ «Մեր Հայրենիք»ին:

1862 թուականին Միքայել Նալչանտեան ձերբակալուած է ցարական ոստիկանութեան կողմէն, որովհետեւ իր մօտ գտած են նամակներ՝ ուղարկուած ծանօթ յեղափոխականներու կողմէ: Երեք տարիներու բանտարկութենէ ետք, անոր առողջութիւնը քայքայուած է, եւ մահացած՝ 1866-ին, սակայն անոր գործերը մինչեւ օրս հայրենասիրութեան վառ կրակով կը բռնկեն բոլոր ընթերցողներուն սրտերը:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Ազատն Աստուած այն օրէն,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել,
Ես՝ անբարբառ մէկ մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը, անհանգիստ,
Օրօրոցին մէջ կապուած,
Ես կու լայի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Կը խնդրէի ես իրմէ՝
Բազուկներս արձակել,
Ես այն օրէն ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերն
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնէն
Խնդացին ու բերկրեցան,
Միակ խօսքը որ ըսի
Չէր հայր, կամ մայր, կամ այլ բան.
Ազատութիւն, դուրս թաւ
Իմ մանկական բերանէն:

«Ազատութիւն», — ինձ կրկնեց
Ճակատագիրը վերէն.
Ազատութեան դուն զինուոր
Կ'ուզես գրուիլ այս օրէն:
Ո՛հ փշոտ է քու ճամբար,
Քեզի փորձանք կը սպասէ.
Ազատութիւն սիրողին՝
Այս աշխարհը շատ նեղ է»:

— Ազատութիւն, — գոչեցի. —
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին.
Ես մինչեւ մահ, կախաղան,
Մինչեւ մահու անարգ սին,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ
Անդադար՝ Ազատութիւն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ
Գիւմրի կամ Կիւմրի



Վարդան Մամիկոնեանի յուշարձանը Գիւմրիի մէջ

Գիւմրին Հայաստանի երկրորդ ամենամեծ քաղաքն է եւ կը գտնուի Շիրակ մարզին մէջ, Երեւանի հիւսիսը: Պատմութեան ընթացքին ան կրած է բազմաթիւ անուններ, որոնց կարգին են «Կումայրի», «Ալեքսանտրապոլ» եւ «Լենինական»:

Գիւմրիի մէջ, կլիման լեռնային է, մեղմ ամառներով եւ ցրտաշունչ ձմեռներով: Անոր կարեւոր յատկանիշներէն մէկն է նաեւ ասանդական խոհանոցը:

Գիւմրին հին ժամանակներէն ի վեր եղած է արուեստներու եւ արհեստներու քաղաք: Անոր ճարտարապետները պահպանած են Գիւմրիի քանդակագործ եւ իւրայատուկ ճարտարապետութիւնը եւ փողոցները հարստացուցած՝ յուշարձաններով եւ գեղեցիկ այգիներով: 2013 թուականին Գիւմրին հռչակուած է մշակութային մայրաքաղաք: Քաղաքը նաեւ նշանաւոր է իր աշուղներով: Իրենց զանազան ձիրքերուն կարգին, գիւմրեցիներ ճանչցուած են նաեւ իրենց սրամտութեամբ:

Գիւմրին հայ ժողովուրդին տուած է բազմաթիւ ազգային գործիչներ, ինչպէս Յովհաննէս Շիրազը եւ Աւետիք Իսահակեանը:




ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԵՐԸ
Չալմը դանկը

«Չալմը Դանկը»ն, որ կը նշանակէ «պարծանք* դանակներով», Մուսա Լեւան ազգային պարերէն մէկն է:

Ան հարսանեկան ռազմապար* է: Իսկ ինչ կապ ունին հարսանիքն ու կոհիւր. Կիլիկեան Հայաստանի անկումէն ետք Մուսա Լեւան շրջանը ենթարկուած է թրքական տիրապետութեան: Այնուհետեւ հայերը իրաւունք չեն ունեցած զէնք կրելու: Իսկ թուրքերուն ու քիւրտերուն մօտ ստոր սովորութիւն եղած է հայկական հարսանիքներուն ընթացքին յարձակիլ եւ հարսը առեւանգել: Այսպիսով, անոնք փորձած են ստորացնել քրիստոնեաները: Այդ պատճառով, հարսը տունէն դուրս բերելու ժամանակ, մուսալեռացիները սկսած են մօտակայ տուններուն տանիքներուն վրայ դանակներով պարել: Այսպիսով, անոնք փորձած են ցուցադրել, թէ իրենք կը տիրապետեն զէնքի եւ հարկ եղած ժամանակ կրնան իրենք զիրենք եւ մանաւանդ իրենց հարսը պաշտպանել:

Չալմը Դանկըն կը պարեն գոյգ-գոյգ, դէմ-դիմաց կանգնած, ցուցադրելով իրենց վարպետութիւնն ու բազկի ուժը:





ԱՂՈՒՈՐ ԲԱՆԵՐ

Հազուագիտ – դժուար գտնուող, աննման

Փխրուն – դիւրին փշրուող

Ռազմապար – պատերազմական պար

Պարծանք – հպարտանք, արժանապատուութեան զգացում

Արժանապատուութիւն – անձի մը պատիւը, յարգը

Դիւրաբեկ – շուտ կոտրուող

Վերականգնել – ետ ոտքի հանել, նորէն կերտել

Ճիրան – ճանկ, սուր եղունգ

Ժանիք - վայրենի անասունի ակռայ

ԻՆՉ ՆՈՐՈՒԹԻՒՆ

«Hayat Project»ը երաժշտական խումբ մըն է, որուն մաս կազմող բոլոր արուեստագէտները ծագումով գիւմրեցի են: Անոնց երգացանկին մէջ կրնաք գտնել թէ Գիւմրիի ժողովրդական երգեր, թէ յայտնի հայկական երգերու մէկտեղումեր, թէ սեփական ստեղծագործութիւններ: Այս խումբը կը տարբերի ուրիշ արուեստագէտներէ իր կատակ երգերով: Անոնց երգերուն ընկերակցող տեսերիզները յաճախ ճոխացուած են զուարճալի թեմաներով, աշխոյժ պարերով եւ հետաքրքրական տարազներով:

Այս ամսուան սկիզբը, Արցախի Անկախութեան տօնին առիթով, «Hayat Project»ը հրապարակեց «Ես քո Արցախն եմ, դու իմ Հայաստանը» երգը, որուն գլխաւոր պատգամն այն է, որ առանց անկախ Արցախի չկայ անկախ Հայաստան, որ բոլորս մէկ ժողովուրդ ենք եւ ունինք մէկ մեծ հայրենիք:

Անոնց գեղեցիկ ստեղծագործութիւններէն են նաեւ «Գտնիմ եարիս», «Ըտիկ է սէրը», «Մեռնիմ կեանքիդ» եւ «Զիզի պիզի» երգերը:

«Ես քո Արցախն եմ, դու իմ Հայաստանը» երգը կարելի է լսել ու դիտել YouTube-ի հետեւեալ կապով https://www.youtube.com/watch?v=u1Ztv_jp9Dw կամ Google-ի էջի մը վրայ «Ես քո Արցախն եմ, դու իմ Հայաստանը» շարելով:

Բարի վայելում:



ՊԵՏԻԿԻՆ ԶՎՆՈՐՍՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Պետիկ ծուկ որսալ շատ կը սիրէր: Կողովին մէջ կը դնէր մեծ ու պզտիկ կեռեր, թելեր, որդեր եւ կ'երթար ծով: Կը նստէր ժայռին վրայ, եղէգին ծայրը կ'անցընէր թելը, թելին ծայրը կը կապէր կեռը, կեռին վրայ կ'անցընէր որդը եւ որդով թելը կ'երկարէր ջուրին մէջ:

Որսացած ծուկերը կը դնէր կողովին մէջ մայրամուտին եւ կը վերադառնար տուն:

Ճամբան թաղի տղաքն ու կատուները կը հաւաքուէին Պետիկին շուրջ.

- Բաց կողովդ, տեսնենք որքան ծուկ որսացեր ես:
- Մե՞ծ են, թէ փոքր:
- Արծաթագոյն են, թէ կարմիր:
- Ո՛ր է մե՞ծ ծուկը, հապա խոստացար ծովին ամէնէն մեծ ծուկը բռնել,- կը հարցնէն թաղի տղաքը:
- Օ՛, Օ՛, որսացի այդ մեծ ծուկը, բայց խայտառակը ձեռքէս այսպէս սահեցաւ փախաւ, այսքան մեծ էր ան, - ձեռքերը լայն բանալով Պետիկ ցոյց կու տար ծուկին մեծութիւնը:
- Պետիկին որսացած մեծ ծուկը նորէն ջուրը ինկեր է, - կ'ըսէին թաղի տղաքը եւ քան քան կը խնդային:
- Գիշեր մը Պետիկ զարմանալի երագ մը կը տեսնէ:
- Երագին մէջ կ'երեւին կարթ մը, տոպրակ մը, անհաւոր կառք մը եւ մեծ, շատ մեծ ծուկ մը:
- Այս երագս մեծ իմաստ ունի,- կ'ըսէ Պետիկ:
- Յաջորդ օրը կ'աննէ հայրիկին կարթը, մեծ մայրիկին քորջէ տոպրակը եւ կը շինէ անհաւոր փայտէ կառք մը, երկու երկար կոթերով:
- Կողովը կը դնէ կարթին մէջ, կարթը կը դնէ տոպրակին մէջ, տոպրակը կը դնէ անհաւոր կառքին մէջ, կ'աննէ եղէգը եւ կ'ուղղուի դէպի ծով:
- Ծովը այեկո՞ծ էր, այիքները ջուրը վեր-վեր կը նետէին: Պետիկ առանց վախնալու կը կայնի ժայռին վրայ, մէկ ձեռքին՝ եղէգն ու կարթը, իսկ միւս ձեռքին՝ տոպրակը:
- Զուկերը վեր-վեր կը ցատկէին այիքներուն հարուածներուն հետ, ամբողջ ժայռը կը ծածկուէր մեծ ու փոքր ծուկերով:
- Պետիկին աչքերը լայն-լայն կը բացուէին, ուղղակի կը խենթանար, այսքան մեծ ծուկ ան չէր տեսած կեանքին մէջ, ան կարթը ձեռքին աջ ու ձախ կը վազէր:
- Վերջապէս շատ մեծ ծուկ մը կը տեսնէ, որ ժայռին ճեղքին մէջ մնացած պոչը վեր-վար կը շարժէր:
- Պետիկ անմիջապէս կարթը կ'երկարէ կամացուկ մը, եղէգով ծուկը կարթին մէջ կը գլտորէ, կարթն ու ծուկը կը դնէ տոպրակին մէջ, տոպրակը կը դնէ անհաւոր կառքին մէջ եւ եղէգը առնելով կը վազէ դէպի տուն:
- Ի՛նչ կայ Պետիկ, այս ինչո՞ւ հե՛ ի հե՛ կը վազես:
- Որսացի, մեծ ծուկը որսացի,- շունչը արագ-արագ առնելով կը պոռայ Պետիկ:
- Լաւ որ ձեռքով չես բռներ ծուկը, թէ ոչ... կը սահէր ու փախչէր:
- Պետիկին մայրիկը կը մաքրէ ծուկը:
- Պետիկին մեծ մայրիկը կ'եփէ ծուկը:
- Պետիկին հայրիկը, քոյրիկը, թաղի ընկերները եւ նոյնիսկ կատուները կ'ուտեն ծուկը:
- Այդ օրը բոլորը միասին կ'որոշեն Պետիկին տալ «Վարպետ ձկնորս» անունը:

Նազան Ա.

ԳԻՏԷՐԻ ԹԵ

- Արջերը ունին 42 ակռաներ:
- Քուլաները օրական 18 ժամ կը քնանան:
- Կոկորդիլոսները չեն կրնար իրենց լեզուն շարժել:
- Առաջին առագաստանաւերը կառուցուած են Եգիպտոսի մէջ:
- Կապոյտ աչքեր ունեցող ճերմակ կատուները ընդհանրապէս խուլ կ'ըլլան:
- Ամենահազուագիտ* ադամանդը կանաչ ադամանդն է:
- Քու ներշնչած թթուածինիդ 25%-ը ուղեղդ կ'օգտագործէ:

ՇՈՒՏԱՍԵՆՈՒԿ

Սարի ուսին սիրուն լուսին,
սիրուն լուսին սարի ուսին:

ՎԱՐՔ ՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐՊ

Բարեւ

Անահիտ Պալեան

Ուրախ ու խաղաղ ապրելու համար,
Ազնի ու քաղաքավար ըլլալու համար,
Սորվինք իրարու հետ լաւ վարուելու ձեւեր,
Սորվինք իրարու հետ լաւ վարուելու խօսքեր:

Առտուն երբ արթնանք,
Ինչ տրամադրութեան մէջ ալ ըլլանք,
Բարի լոյսով մեր բերանը բանանք:
«Բարի լոյս» պապային, «Բարի լոյս» մամային,
«Բարի լոյս» քոյրիկին, «Բարի լոյս» աղբարիկին,
«Բարի լոյս» մեծ մայրիկին ու մեծ հայրիկին:
Երբ հասնինք դպրոց,
«Բարի լոյս» ըսենք ուսուցչուհիին,
Մեր դասընկերոջ ու դասընկերուհիին:

Երբ ըլլայ կէսօր,
Ըսենք «բարի կէսօր»:
Երբ ըլլայ իրիկուն,
Ըսենք «բարի իրիկուն»:
Իսկ օրուան որեւէ ժամուն,
Կարելի է ըսել «բարեւ» ամէնուն:
Բարեւ փոխանցէ ժպտուն,
Օրդ անցուր ուրախ, եղիւր մտքով արթուն:
Խօսակիցիդ հետ, խօսքդ սկսիւր «բարեւ»ով
Ու վերջացուր զայն «բարի օր» մաղթելով:

Որեւէ ատեն երբ մէկու մը հաղիպինք,
Կամ որեւէ տեղ երբ մուտք գործենք,
Առաջին հերթին բարի ժպիտով «բարեւ» ըսենք:

Հարցումներուն պատասխաններուն առաջին տառերը շարելով, գտի՛ր պահուած բառը:

Միքայէլ Նալպանտեանին ծննդավայրը:

«Խենթը», «Դաւիթ Բէկ» եւ «Կայծեր» գիրքերուն հեղինակին գրչանունը:

Անասուն մը, որ օրական 18 ժամ կը քնանայ:

Կը նշանակէ անձի մը պատիւը, յարգը:

Հօր ժանիքներով եւ սուր ճիրաններով գիշատիչ անասուն մը, որ կը պատկանի կատուի ընտանիքին:

Գիւմրի քաղաքին ճարտարապետութիւնը քանդակագարդ է եւ _____:

«Hayat Project»-ին Արցախի անկախութեան նուիրուած երգին վերնագիրը:

Ո՞ր հռոմէացի կայսրը, հայ իշխաններուն եւ զինուորներուն օգնութեամբ, կը յաղթէ պարսիկներուն:



ՅՈՎԱԶ

Յովազը, կամ ընձառիւծը, կը պատկանի կատուի ընտանիքին: Ան գիշատիչ անասուն է, այսինքն կ'որսայ եւ կ'ուտէ ուրիշ անասուններ: Ան ունի մկանոտ մարմին մը, հօր ժանիքներ*, լայն թաթեր եւ սուր ճիրաններ*:

Յովազը կ'ապրի անտառներուն մէջ եւ լեռներուն վրայ: Ան ունի սուր տեսողութիւն եւ լաւ լսողութիւն: Ան նաեւ դիւրութեամբ կրնայ մագցիլ ծառեր:

Ազատութեան մէջ յովազը կրնայ ապրիլ 15 տարի:

20-րդ դարու կէսերուն, յովազները տարածուած էին ամբողջ Հայաստանի տարածքով եւ կ'ապրէին մարդոց հետ կողք կողքի: Այսօր անոնց թիւը շատ նուազած է եւ զանոնք կրնանք գտնել Խոսրովի անտառին մէջ կամ Մեղրիի լեռնաշղթային մօտ:

Օգնէ՛ Մամիկին ու Պապիկին, որ գտնեն իրենց ճամբան դէպի Անկախութիւն:



Վարժութեան պատասխանն է «Հայրենիք»



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Արիանէ Թապալեան
Զեւայղացք՝ Լորի Խաչերեանի